

ՕՅԻ ՀՈՒԼԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի կնիկ մի տղա ա ունենում: Դրանք ջլիգդան քյասըբնու քյասիբն են ըլլում:

Տղեն ամեն օր տանում ա քախկըմը շլակով չախ ա ծախում.— Հայ չախ եմ ծախում, հայ չախ եմ ծախում,— բերում են դրանով ապրում:

Էդ տղեն մի օր էլ քախկիցը եդ գալիս տենում ա, որ հրես մի կատու՝ շինքիցը կապել են ու ծեծում են:

Դա դանչանք ա անում, թե.— Մեխկ չի՞, էդ անլիզու հայվանը, որ ծեծում եք:

Ասում են.— Թե սիրտդ շատ ա ցավում, փող տուր՝ բաց թողունք:

Էդ նաչարն իրան ըշխատած փողի կեսը տալիս ա, էդ կատվին ազատում: Գալիս ա տենում, հրես մի թագի էլ են կատվի պես ջանը դաղում: Ձեռին ինչքան փող ա ունենում, տալիս ա՝ դրան էլ ազատում: Էդ կատուն ու թագին ընգնում են դրա եղնա ու գալի:

Գալիս ա տուն հասնում, մորն ասում ա.— Սհե-սհե:

Մերն ասում ա.— Ի՛, եղին քի տանի, մթամ մենք ապրելու հնար շատ ունինք, դրանց էլ ջոգ բերի՞ր:

Ասում ա.— Բան չի կա, նանի ջա՛ն, դրանք իրանց գլուխը կպհեն:

Եղնա էդ թագին ու կատուն ամեն օր գնում են ծովի դրաղին թոռչըքերի բռնած ձգան ախկընով ապրում: Մընել կատուն ախկընու միջիցը մի օցի հուլն ա գդնում:

Թագին կռվում ա, թե— Ինձ տուր:

Տալիս չի, վազելով բերում ա էն տղի ըղաքին վեր գձում:

Էն նաչարն էլ դրա գորութինը գիդենալիս չի ըլլում, վեր ա ունում, նհե ձեռին պլպլալով բռնում ա:

Էդ հուլը լիզու ա ըլլում, ասում ա.— Ասա՛, մուրագդ տամ:

Մին դա շշկլվում ա, հմա եդ ասում ա.— Քիանի խնթրում եմ, որ ինձ մի օթախ տաս, մինմին ձեռք շոր տաս հաքնինք, ըշխատենք, միչին նամուսով ապրինք, մեր էս բնիցն ազատվինք:

Հլե էդ ասիլն ա տենում, մին էլ տենում ա՝ մի լավ օթախի միջի են, իրան ու մոր հմար էլ ամընու հմար մի ձեռք շոր ընդի դրած: Նոր էնա ուրախանաս, ինչ ուրախանում են, խնդաս, ինչ խնդում են:

Տղեն որ մի լավ հուլի գորութինն իմանում ա, մի օր էլ մորն ասում ա.— Գնա ինձ հմար թաքավորի ախչիկն ուզե:

Ասում ա.— Վա՛յ, մենք սհե քյասիբ, ես ո՞նց գնամ թաքավորի ախչիկն ուզեմ, ինձ թաքավոր մող կթողո՞ւ:

Ասում ա.— Դու գնա, վախիլ մի, ինչ պայման դնե, ասա— հա՛, ռազի եմ:

Էնա գնում ա թաքավորի դռանը նստում:

Գնում են, ասում.— Թաքավորն ապրած կենա, մի պառավ ա էկել դռանը նստել, ըմանչում ա, թե տուն գա:

Ասում ա.— Կանչեցեք գա:

Կանչում են: Գնում ա ասում.— Թաքավորն ապրած կենա, մի բան եմ ուզում ասեմ, հմա ըմանչում եմ:

Ասում ա.— Ըմանչիլ մի, ասա՛:

Ասում ա.— Իմ տղեն քու ախչիկն ուզում ա:

Ասում ա.— Շատ էլ լավ ա անում, հմա գլխիցը վենձ գործ ա բռնել, նա կարալ չի իմ ջուղաբը տալ ու ինձ բարեկամ դառնալ:

Ասըմ ա.— Կարա՛, դու պայմանն ասա:

Ասըմ ա.— Գնա՛ քու տղին ասա՝ էն թավուր պալատ շինե, որ արևը գա ճաշի տեղը, նրա պալատիցը դեռ իմ պալատի վրա շվաք ըլի: Եղնա քու պալատից չկել իմ պալատը ճամփա շինե, ճամփու դրաղները էնքան բանցրը ծառեր ըլի դուս էկած, որ ծերներուն իրար գա, խալիչքերն էլ փռած ըլի, որ իմ ախչիկը գնա-գա, ոտը գեղնին չի առնի: Գնա ասա, թե կարա շինե, իմ ախչիկը կտամ, թե խու կարալ չի հա, քու գլուխն էլ, տղիդ գլուխն էլ կթոցնեմ, որ չիմն էլ հսկանան, թե ամեն մարթի բան չի թաքավորի ախչիկն ուզիլը:

Գներմ ա ասըմ տղին:

Տղեն ասըմ ա.— Էդ ի՞նչ ա որ, հլե հրեսի: Էն հլին խնթրմ ա, ասըմ ա.— Սիե-սիե, պալատ շինե:

Քներմ են: Ըռավոդը վի ա կենըմ, տենըմ ա մի պալատ շինած, որ էլ ասելու ոչ, թաքավորի պալատին շվաք ա արել: Թաքավորը հե գիդե թե դեռ լիսացել չի, քնած ա մնացել: Եղնա ճամփու դրաղնին էլ նիե ծառներ են ըլլմ:

Մորն ասըմ ա.— Գնա ասա՛, ասածդ էլավ, հմի՞ ինչ ես ուզմ:

Մերը գներմ ա, ասըմ:

Հմի էլ ասըմ ա.— Թե քու տղեն կարա իրան սարք ու չխարովն իմ դոշունին հրցավորե, ախչիկս կտամ, թե խու կարալ չի— տալ չեմ:

Էնա մերը եդ գալիս ա տղին ասըմ:

Տղեն ասըմ ա.— Էդ ի՞նչ ա որ, հլե հրեսի:

Էդ հլին ասըմ ա, հուլը ըստողնի ա սարքըմ, ամեն բան նրանց վրա լքցնըմ ա, դոշունը գալիս ա ուտըմ, ամեքը շոգ ըստաքանըմ, ջոգ տալեքըմ, ջոգ ըմանըմ հրցավորվըմ ա, խմըմ են, քեփ անըմ, գներմ են: Եդ մերը գներմ ա թաքավորի կուշտը:

Հմի էլ ասըմ ա.— Թող քու տղեն իրա պալատիցը չկել իմ պալատը խալիչքեր փռե, որ իմ ախչիկը ոտը գեղնին չի դնե:

Եդ էդ էլ ա անըմ: Էնա նոր թաքավորը, շան հալի, ախչիկը տալիս ա, օխտն օր, օխտը քշեր հրսանիք են անըմ, բերըմ են տղի տուն: Խնդաս ինչ խնդըմ են, ուրխանաս՝ ինչ ուրխանըմ են, հմա վայ նրանց խնդալուն:

Տենց մխելի վախտ անց են կացնըմ: Էդ տղեն բերըմ ա մի արաբի իրան վեզիր ա շինըմ: Էդ Արաբն աչկն ա դնըմ էդ տղի ապրուստի ու կնգա վրա, միտկն ա անըմ, թե ո՞նց տիրանա: Դա գիդենըմ ա, որ տղեն թաքավորի սրտովը չի, գներմ ա թաքավորի հետ մսլահաթ անըմ:

Թաքավորն ասըմ ա.— Թե կարըմ ես՝ ախչիկանս սիրտը գողացի, մնացածը հեշտ ա:

Արաբը գներմ ա գլուլա դիբած ախչիկա հետ մողիկանըմ, հետո սիլի-բիլի ա անըմ, որ նրանից տղի գաղտնիքն իմանա:

Որ շատ մողիկանըմ են, մի օր էլ ասըմ ա.— Թաքավորի ախչիկ, դուն ի՞նչ կնիկ ես, որ քու մարթի գախտնիքն էլ չի գիդես, նա որ քեզ սիրելիս ըլի, քեզանից գախտնիք կպահե՞:

Ասըմ ա.— Ի՞նչ ա թաքուն պիել իմ մարթն ինձանից:

Ասըմ ա.— Նա քեզ ասել ա՞, թե ինքն ընչով էդքան հարստացավ, որ քու հորն էլ անց կացավ:

Ըտի թաքավորի ախչիկն ընգներմ ա մտկի եղնա:

Ըրիգունը մարթը տուն ա գալի, տենըմ ա կնիկը մրթշորված, թթված, նստած ա: Մող ա գալի, թե ճտովն ընգնի, պըչպաչորվին ամեն հետվա պես, ձեռով եդ ա բոթըմ, թող չի անըմ մող գնալու:

Ասըմ ա.— Խի՞ ա քեփդ խարաբ:

Թե ասըմ ա.— Նրա համար, որ դուն ինձ սիրըմ չես:

Ասըմ ա.— Ես քեզ սիրըմ եմ, դու խի՞ ես էդ դառը խոսկն ասըմ:

Ասըմ ա.— Որ ինձ սիրըմ ես, խի՞ ես ինձանից գախտնիք պիւրմ, խի՞ չես ասըմ, թե դուն ընչով ես հարստացել:

Նաչարն ըտի մնըմ ա սլարած, հմա որ ինքը շատ ա սիրելիս ըլըմ, կարըմ չի խաթրիցն անց կենա, հուլը լեզվի տակին ա պիւրմ ըլըմ, հանըմ ա շհանց տալի, ասըմ ա.— Հրես իմ հարստութիւնի ուժը սրա միջին ա:

Էն պոճըկվածը, որ վլվլալեն հուլը տենըմ ա, ասըմ ա.— Ինձ տու իմ կշտին կենա, հետը խաղ անեմ, ուրխանամ:

Մթամ ուզըմ ա հուլն Արաբին շհանց տա, հմբարտանա, որ իրա մարթն իրան շատ ա սիրըմ: Նա էլ խաթրիցն ըլըմ չի, դե ինչ գիդե, թե ընչի հմար ա ուզըմ:

Տալիս ա իրան, հունարն էլ շհանց ա տալի, թե՝ մարթի շհանց չի տաս:

Հմա ո՞րդի.— Էքսի օրը վազելով տանըմ ա Արաբի կուշտը, թե.— Բա ասիր իմ մարթն ինձ սիրըմ չի, բա խի՞ ասավ, թե իրա հունարը որն ա: Ասըմ ա ու հուլը վլվլալով շհանց ա տալի: Արաբն աչքերը չորս ա անըմ, ուզըմ ա, թե վրա թոչի խլե, հմա եդ սիրտ չի անըմ:

Դրանից եդն էլ Արաբը թեզ-թեզ գալիս ա եդ անսկամի կուշտը: Էն նաչարիցը սուտ-սուտ գեշ բաներ ա խաբար տալի, քածի հմար էլ լավ-լավ բաներ ա առնըմ, բերըմ ա ուտացնըմ, էնքան անըմ ա, գրավըմ ա, իրար վրա սեր են գճըմ, Էն նաչարին էլ բանի տեղ չեն դնըմ: Մի օր էլ հուլը մարթից թաքուն գողանըմ ա, բերըմ ա, Արաբին տալի:

Արաբը հլին ասըմ ա.— Սևանա ծովըմը մի պալատ շինե, իրա ժամովը, իրա հարմարութենովը, ինձ ու թաքավորի ախչըկանն էլ— միջին:

Հլե չկելն աչկներուն բաց ու խուփ են անըմ, մին էլ տենըմ: Ըտի իրար էրես ուտելով, կովելով ցամաքն են դուս գալի: Հլե եդ վախտը մին էլ տենըմ են, որ թոռչըքերը գալիս են:

Ասըմ են.— Ըստի կենանք գան, բալի ձգները հուլը կուլ տված ըլին— հանեն, ախկընու միջիցը գդնինք:

Էնա գալիս են ձուգ բոնըմ, ախկընին հանըմ, դեն ածըմ, հանըմ դեն ածըմ:

Էդ կրակի էկած շունն ու կատուն էլ ոնց են քրքրում էդ ախկընին, էլ ասելու ոչ:

Թոռչըքերն ասըմ են.— Էս տերը մեռածնին էս ընչի՞ են ման գալիս ըսօրվանց օրը: Փետը քաշըմ են, հետ ածըմ, հմա դրանք եդ գալիս են ման գալի:

Հլե մին էլ կատուն ասըմ ա.— Հրես գդա:

Շունը վրա ա թոչըմ, որ ձեռիցը խլե, տանի ինքը լավամարթի դառնա, հմա կատուն աղաք ա ընգնըմ ու վազ տալի, շունն էլ եդնեն: Տանըմ ա տղի ըղաքին վեր դնըմ: Նաչարը վեր ա ունըմ ձեռն ու, ուրախանաս, ինչ ուրխանըմ ա, կատվին պըչպաչորըմ ա, տենըմ ա թագին հեռու կանգնել, խեղճ-խեղճ մտիկ ա անըմ, գնըմ ա նրան էլ պաչըմ, բերըմ ա էրկուսին էլ մի լավ պատվըմ ա իրանց տան էլածիցը:

Լիսաբաշտեն հրլին ասըմ ա.— Քիանից խնթըմ եմ, որ Սևանա ծովի պալատը հլե նհե սարքի բերես, թաքավորի պալատի դիմացը ոտն անես, նրա տեղը ծովըմը մի վանք շինես, իմ հիշատակը:

Չկելն աչկը խուփ ա անըմ, եդ մին էլ բաց ա անըմ, մին էլ տենըմ ա՝ պալատը կաղնած:

Գնըմ ա տենըմ Էն անսկամը Արաբի հետ փթաթորված՝ քնած են:

Մարթ ա դրգըմ թաքավորի կուշտը, ասըմ ա.— Թող գա իրա անսկամի արածնին տենա:

Թաքավորը գալիս ա նրանց շնթած տենըմ, լիզուն լալկըմ ա, կարըմ չի մի բան էլա ասե: Տղեն հրաման ա տալի, իրա քաղկի ժողովուրթը չիմ գալիս են տենըմ:

Ասըմ ա.— Այ ժողովուրթ, հմի ձեր խղճին եմ թողըմ, ի՞նչ պատիժ տանք սրանց:

Խալխն ամեքը մի կոնից ասըմ են.— Էրկսին էլ դարթի պոչիցը կապենք ու քաշ տանք, թող վենձ թիքան ընգաճնին մնան:

Ըտի թաքավորը հրաման ա տալի իրա դոշունին, որ ժողովրդին դուս անեն: Հմա սաղ քաղաքն էլ գիդե, որ թաքավորն էլ ա ախչըկա արարմունքին ըռագի, որ էն նաչար տղին իրա տանիցը ծեծելով դուս ա արել, ըտուր հմար անց են կենըմ չիմն էլ տղի կուտը, թաքավորին թոլ են անըմ պալատի վերի էտաժիցը ու սպանըմ, Արաբին ու անսկամին էլ կապըմ են դաթրի պոչիցը, քախկըմն էնքան քաշ տալի, վենձ թիքեն անգաճնին են թողըմ, նոր էնա էն տղին թաքավոր են շինըմ: Ինչքան Արաբ ա ըլըմ իրանց ֆողըմը, չիմնուն էլ դուս ա անըմ իրանց ֆողիցը, աշխարը հլալըմ ա:

Տղեն հլին ասըմ ա.— Իմ ֆողըմն ինչքան քյասիբ կա, չիմնուն էլ հարստացրու:

Ինչքան քյասիբ կա, մաննան բեթար չլոտ ու գոչոտ կա, հուլը չիմնուն էլ իսանաշնորքի ա բերըմ, հարստացնըմ: Չիմն էլ ուրախանըմ են, քեփ անըմ, թագա թաքավորի հմար էլ մի քյասըբից սիրուն, խելոք ախչիկ են ուզըմ, օխտն օր, օխտը քշեր թագա հըրսանիք են անըմ, ուրխանաս՝ ինչ ուրխանըմ են, բախտավորվիս՝ ինչ բախտավորվըմ են: